

Ապրիլի 18-ին՝ Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային օրվան ընդառաջ

Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային խորհրդի՝ ԻԿՕՄՕՍ-ի առաջարկությամբ 2011թ. ապրիլի 18-ը՝ Հուշարձանների և տեսարժան վայրերի միջազգային օրն ողջ աշխարհում կնշվի «Ջրի ժառանգությունը» խորագրի ներքո:  
Օրվա խորհրդին հավատարիմ՝ «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանը և «ԻԿՕՄՕՍ/Հայաստան» հասարակական կազմակերպությունը հանդես կգան համատեղ նախաձեռնություններով՝ շեշտելով ջրի՝ մեր մոլորակի կենսարար ռեսուրսի և ժառանգության՝ մեզ շրջապատող միջավայրի գեղեցկության երաշխավորի պահպանության կարևորությունը: Կարդալ ավելին